

Պ-874-23.02.2021-ՏՀ-011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 19-րդ հոդվածի 9-րդ բաժնի 9.8.-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

9.8. «Մեկ մարզում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության համար տարեկան՝ բազային տուրքի 3000-ապատիկի չափով»:

**Հոդված 2.** Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 9.8.1. կետով՝

9.8.1. «Երեւան քաղաքում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության համար տարեկան՝ բազային տուրքի 100.000-ապատիկի չափով»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին:

## ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-874-23.02.2021-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին Պ-874-23.02.2021-ՏՀ-011/1 նախագծով առաջարկվում է պետական տուրք սահմանել մեկ մարզում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության, ինչպես նաև Երևան քաղաքում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության համար: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ բաժնի 5-րդ կետի համաձայն՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն է համարվում մասնավոր մուլտիպլեքսորի գործունեությունը: Հնարավոր տարրնկալումներից խուսափելու նպատակով՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ կետում: Նախագծում առկա դրույքաչափերը քննարկվել են համաձայնեցվել են ԲՏԱ նախարարության ներկայացուցիչների հետ:

Քանի որ նախորդ տարի ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ի թիվս այլ կարգավորումների, կանոնակարգում է նաև հեռուստաընկերությունների լիցենզավորման կարգը, իսկ §Պետական տուրքի մասին՝ օրենքի համաձայն՝ պետական տուրք գանձվում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար, հետևաբար, անհրաժեշտություն է ծագել «Պետական տուրքի մասին» օրենքի նախագծի ընդունման դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ բաժնի 5-րդ կետում՝ հնարավոր տարրնկալումներից խուսափելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 19-րդ հոդվածի 9-րդ բաժնի 9.8.-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

~~9.8. մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 100.000-ապատիկի չափով~~ «Մեկ մարզում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության համար տարեկան բազային տուրքի 3000-ապատիկի չափով»:

**Հոդված 2.** Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.8.1. կետով՝

9.8.1. «Երեւան քաղաքում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության համար տարեկան բազային տուրքի 100.000-ապատիկի չափով»:

**Հոդված 3.** ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~ **Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին:**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-874-23.02.2021-SՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	1. Նախագծի 1-ին հոդվածում «վերաշարադրել» բառն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջները:	Առաջարկությունն ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	2. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության համար գործող օրենսդրությամբ նախատեսված տարեկան բազային տուրքի 100.000-ապատիկի չափով պետական տուրքը Երևան քաղաքի մասով առաջարկում ենք թողնել անփոփոխ, քանի որ առաջարկության նպատակը միայն մարզերում մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է՝ հաշվի առնելով, այն որ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության համար գործող օրենսդրությամբ նախատեսված՝ տարեկան բազային տուրքի 100.000-ապատիկի չափով պետական տուրքը բարձր է և հնարավորություն չի ստեղծում մարզերում նշյալ գործունեությունն իրականացնելու համար:	Առաջարկությունն ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	Աժ պատգամավոր	Պետական տուրքի մասին» Հայաստանի	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է, որ օրենքն ուժի մեջ մտնի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող	Առաջարկությունն	Ընդունվել է

	<b>Նագելի Բաղդասարյան</b>	<b>Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ</b>	տասներորդ օրը: Հաշվի առնելով պետական տուրքի կտրուկ իջեցումը եւ նպատակ հետապնդելով բոլոր տնտեսվարողների համար համահավասար պայմանների սահմանումը, առաջարկում եմ նախագծի փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը հետաձգել եւ 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.  Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին:	ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	
	ՀՀ կառավարություն	<b>«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ</b>	Առաջարկվում է նախագծերի փաթեթը լրացնել «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով:	Առաջարկությունն ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	ընդունվել է